2021-2022 ուստարի

Տարեվերջյան հաշվետվություն

2-րդ^{բ} դասարանում տարվա սկզբում սովորել է 23 աշակերտ, կիսամյակի վերջում թիվը դարձել է 25: Դասարանի ընդհանուր առաջադիմությունը 100% է, որակական առաջադիմությունը՝ 64%, կա 6 գերազանցիկ, որոնցից 3-ն աղջիկ է, 3-ը՝ տղա, և 10 հարվածային, որոնցից 4-ը աղջիկ է, 6-ը՝ տղա: Չառաջադիմող աշակերտ չկա:

Կիսամյակի ընթացքում իրականացվել են ծրագրով նախատեսված բոլոր թեմաները, գործնական, թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքները:

Մայրենի լեզվից կիսամյակի ընթացքում իրականացվել են բաց դասեր հետևյալ թեմաներով՝ Նախագծային աշխատանք ''Երկնքից երեք խնձոր ընկավ''' թեման, «Սասունցի Դավիթ» համակարգչային դաս, ''Աշուն, հյուրընկալիր մեզ'' գործնական աշխատանք, ''Ժողովուրդն իմաստուն է '' նախագծային աշխատանք, ''Հայաստանը մեր հայրենիքն է '' թեմայի ամփոփում:

Ես և շրջակա առարկայից իրականացվել են գործնական աշխատանքներ փորձեր , համակաչային տեսանյութերի դիտում հետևյալ թեմաների շրջանակներում՝ ''Ինչ կենդանիներ գիտես, անտեսանելի կապերը բնության մեջ'', ''Մեր այգիները և բանջարանոցները'', ''Ընտանի և վայրի կենդանիներ'', ''Ինչով ենք սնվում, եթե ուզում ես առողջ լինել'', '' Ես հետիոտն եմ'', գործնական աշխատանք՝ ''Սենյակային բույսերի վերատնկում'' :

Կիսամյակի ընթացքում աշխատանքներ են տարվել ուսման մեջ փոքր – ինչ հետ մնացող աշակերտների և նրանց ծնողների հետ: Իրականացվել են ծնողական ծողովներ և հանդիպումներ:

Դեկտեմբերին իրականացվել է էքսկուրսիա ՝ Հ.Թումանյանի անվան տիկնիկային թատրոն, դիտելու «Չոփչոփիկը» ներկայացումը:

Կիսամյակի վերջում նախատեսվել է էքսկուրսիա ՝ Բյուրական/19.06.22./:

Դասղեկ՝ Ա. Մ. Հ. Հայրապետյան